





# Յ. ՓԷՄՊԵՃԵԱՆ, ԵՒ ԸՆԿ.

Գ. Ա. Հ. Ի. Բ. ( ԵԳԻՊՏՈՍ )

391

# Մ Ե Ծ Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

ԱՐԵՎԵԼՈՅՍ ԻՐԱՆԻ ԱՅԻՆՆԵՐՈՒ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՍԻՊԻԵՐՆԵՐՈՒ  
Յանկային պատրաստած մեծաչափ սիլվետներ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ԳԼԽԱՆՈՐ ՄՅԵՐԵՆՈՅ  
Հետադարձակ Հասցի — Փեմպեճեան — Թեղևի Թիւ 689


ՀԻՆ ԶԱՊԻՑԻ ԴԻՄՈՏ  
Նախագահութի Թիւ 129

# Պ. ՅՈՎ ՄԵՓԵԱՆ

Tourists' Stores ESTABLISHED 1885

ՄԹԵՐԱՆՈՅ ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ԱՆԳՂՍՏԱՆ ԱՊՐԱՆԱՅ  
Պայ-եյ-հասիս Փողոց Տիգրան փառայի սան դիմացը  
ԳԱՀԻՐԷ

Ամառուան կոշիկներ ամեն գոյներու վրայ  
գոյոցը 15 դիկմ. և մինչև 40 դիկմ.  
Ձմեռուան կոշիկներ գոյոցը 35—100 դիկմ  
Խրախաչի գոյոց կոշիկ տաշխառուեալ  
շաւազոյն կաշիէ թրջալուծ.  
Փեղոյներ, պրակեթներ, Ամեյիներ,  
Անգլ վրձիններ ամեն տեսակ, ծածկոցներ,  
բուրաքի կրասարեալ պեթեր. որսորդութեան  
կարմաճներ. մանրորդութեան ամեն տեսակ  
սևեմկներ, Անգլ. գորտուր կաշիէ պայտասակ  
ներ (Gladstone). ալ իւր սև կոշիկներ քորթ-մոնեներ.  
հեծեղանիսի պեթեր.  
Ճոր պոյներ. գլեյիներ և այլն.



Մ Ե Կ Գ Ի Ն ԵՒ Կ Ա Ն Ի Ր Ի Կ

315

նէն այդ օրը Դիւանի Ատենագալիքը ներկա-  
յացուցած էր ինքզինքը, դիւանական օրի-  
նացաճարութեանց մասին իր ունեցած անկա-  
րելի տգիտութեամբը հանդերձ, ինչպէս որ  
բացատրած ենք ասկէ առաջ: Արդ՛ հետեւ  
« Դիւանի ընտրութիւնը » օրակարգին մէջ  
գնեցէ՛ք և այդ օրակարգը պարունակող նա-  
մակները ընկերաց զրկուելու համար ստո-  
րագրելէ վերջ անգամ, չէ՞ր կրցած մտա-  
ծել թէ ինք հրաժարած է, և իր Դիւանը  
ներկայացնելը նոր վաւերացումի կը կար-  
տէր, ինչ որ չպիտի յաջողէր անշուշտ:

Այդ օրը Տեղեկագրի մասին եղած  
արձանագրութիւնն ալ ո՛չ միայն զայն  
պատրաստող և ստորագրող անձերուն վի-  
րաւորանք մ'էր, այլ նաեւ նախատիւք մը  
ներկայանալուն հասցեյին, և Դիւանը  
կազմակերպութեան գլուխը կամ ստոր  
գտնուողներուն անբացատրելի անճարակա-  
ւորութիւնը, կողմնակցական, փաստակար ու չա-  
համող ընթացքը կը բացատրէր: Բայց ինչ  
կարելի էր յուսալ օրինակներէ:

Չարմախալին հոն է որ դեռ պիտի  
գտնուին անխելներ, որ այս անգամ տես-  
նելով և իրողութիւնները շոշափելով հան-  
դերձ, քուէարկեն...:

Գողն ու գողակիցն ի միում պատժոյ  
են կ'ըսէ մեր աւետարանը: Նենք գիտոր  
թէ՛ այսպիսի գեղձուճները քաջակերող  
քուէարկողներուն ի՞նչպէս կուսուցանէ ի-  
րենց...:

Ահա տեղեկագրի մասին եղած արձա-  
նագրութիւնը մտաւոր իմաստով:

« Գնեցէ՛ք Յանձնաժողովին տեղեկագրի-  
րը կարգացուցաւ և նախորդ վարու-  
թեան յանձնուեցաւ, որպէս զի իր ար-  
դարացուցիչ պարագաները ներկայացնէ  
Ընդհ. Ժողովին (ՄԻՆ ԵՐԱՍՏՈՍ ԱՄՐԱՆԻ) »

Վերջին երեք քառերուն արձանագրուի-  
լը մոռցուած էր կ'ըսենք...:

Ըսել է ընդունուած է որ Երկրորդին  
մը կայ մէջ տեղը արդարանալի, և այդ-  
չարաշուք գործին կերպով մը մասնակցող-  
ներ կան ժողովականներէն... այնպէս որ  
մէկ տրիալ անխելն իրենք զիրենք արդար-  
բացնելու պէտք ունին: Ըսել է արձանագրու-  
եալներ են... չէ՛:

Ասիկայ արդարացուցիչ ո՛չ մէկ կողմ  
ունի:

Ընկերները կրկար առնէն ի վեր չա-  
հաբաժին չ'ստանալէ զատ, վրայ ալ պիտի  
սան, որպէս զի զեղձարարները և անձեռն-  
հաս անպարտաճանաչները ապրին... ուրա-  
նալու համար:

Արքայաները պիտի զրկուին իրենց ի-  
րաւունքն, որպէս զի զեղձողներուն շրջա-  
նակ մը իրենց ԱՄՐԱՆՈՍ անունը շահագոր-  
ծելու ելլէ:

Արք ու անտէր մանուկները փողոցնե-  
րը պիտի թափառին և ուսումնէ զուրկ կա-  
րուցներ պիտի դառնան, ու մարդկային  
ընկերութեան ճակտին արտաք պիտի կազ-  
մեն, որպէս զի Բարեգործականին աղա-  
նները վերթական բաժնին յատկացուած  
հարկերն տանելիլու ու կէտով իրենց ան-  
պարտաճանաչութենէն, կամ՝ եթէ կուզէք  
ուրիշ անուն մը տուէք... գոյացած փաս-  
տերը գոցեն. ու գտնուին ուրիշներ ալ՝ որ  
անհատապէս տուժեն, հաւաքական մարմ-  
նոյ մը դիմանալը դոյալուցած փաստը: Ո՛ւր  
է ասոր արդարացուցիչ պարագան ո՛վ ար-  
դարակորով քուէարկուներ...:

Աւաղ. քանի որ մեր բով այսպիսիներ  
ըր զանազանելու և պէտք եղած եղանակաւ  
վարուելու չափ ուղղամտութիւն չ'կայ, ար-  
ժանի՛ք պիտի ըսենք որ դեռ այս անոն-  
խանձելի վիճակին մէջ տարբեր մեր հա-  
մայնքը:

Մենք սակայն խնդրոյն օրինական մա-

սերովը զբաղինք մեր հասկցած շարիւղ, ու  
վերջացնենք այլ ևս:

Նախորդ վարչութեան մէկ քանի ան-  
գամները Տեղեկագրին ուժով աշխատան-  
քում էին. սակայն տարակիս չ'վերջնեք և  
իրականութիւնն ալ է գեղազարար: Հաս-  
տատուն ապացոյցներ չատ կան. Ընդհ.  
Ժողովի արձանագրութիւնն ալ վկայ: Միայն  
արձանագրութիւնը բաւական է մեր ամե-  
նաս ալ օրէնքը յարգել չ'գիտցողները ը-  
լալը հաստատելու համար: Գուէարկողները  
որչափ կ'ուզեն թող իրենց տգիտութիւնը  
իցոյց դնեն, ճշունեւորու ուժով և ու է  
չաճու ակնկալութեամբ իրենց քուէները  
տալով անբասանեալներու: Եթէ կ'ուզեն  
թող մեծամասնութիւնն ալ կ'ազնեն. բայց  
թող լաւ գիտնան որ Բարեգործականին մէջ  
մէկ բաժին տնեցող անհատը միեւնոյն ի-  
րաւունքները ունի, ինչ որ այդ մեծաւատ-  
նալիքն ըստաճը պիտի կրնայ ունենալ օ-  
րէնքի առջև:

Այն օրէնքը՝ որ երկաթէ ձեռքերով  
կը սեղմէ շարագործներուն օճիքը, եթէ ու-  
նենք մեծամասնութիւնն ալ կազմեն:

Բարեգործականին մէջ գողութիւն մը  
եղած է, ընկերներուն, աղքատին ու որբին  
չահաբաժինը գողցուած է և կամ յուր մա-  
տակարարութեամբ փրատուած է: Փաստ մը  
որ այսօր ի մէջ այլոց 180 սակի կը հասնի:  
Եթէ մեծամասնութիւնը լուս է, ու անդին  
մէկ բաժին ունեցող մը օրէնքին դիմէ՛ կը  
հարցնենք. ինչ կ'ըլլայ այդ մեծամասնու-  
թիւնը ըստաճին վիճակը, քանի որ անդին  
ստորագրեալ և Ընդհ. Ժողովէն գրեթէ վա-  
ւերացեալ հոշակաւոր տեղեկագիր մ'ալ  
կայ մէջտեղ, որուն վրայէն կորելով անց-  
նիլ կը մտածէ մեծամասնութիւնը յորձը-  
նուած միամիտներու խումբը...:

Մենք չենք կրնար ընդունիլ որ ըլլայ  
Երկրորդին մէջ. ըլլայ ուրիշ տեղ մը ան-  
բարոյականներու թիւը աւելի շատ ըլլա-  
լուն համար, անբարոյականութիւնը բարո-  
յականութեան գրքին առաջին գլուխը կազ-  
մէ: Անցեալ օրեր այս էջերուն մէջ կը  
կարդայինք թէ Բարեգործականին մէջ 200000 կտրի  
աղիկներ կան: այս թուոյն վրայ հայտնե-  
լով նոյնչափ մ'ալ իրենց գործակալները,  
ըսել է պատկառելի թիւ մը պիտի ունե-  
նայինք 400,000 ի: Հետեւաբար իրենց թի-  
ւը ի նկատի ունենալով պէտք է որ պար-  
կեղտութեան տիպարներ ճանչնայինք զա-  
նոնք, բայց միւս կողմանէ ինչո՞ր օրէնքը  
կը հալածէր այդ գաւազակարգը...:

Ուրեմն օրէնքն է որ պիտի տիրէ և ոչ  
թէ շարագործներու մեծամասնութիւնը:

Ինչ ըսենք ուրեմն այն աթոռասէր  
Ժողովականներուն ո՛ր իրենց ամբաստան-  
ուած ըլլալը գիտնալով հանդերձ, կար-  
գալով մինչև իսկ, տեսնելով նոյն իսկ  
իրենց կողմէ ընտրուած Գնեցէ՛ք Յանձնաժո-  
ղովայ անգամոց ստորագրութիւնները,  
զեւ ժախն արդարակորով ժողովի մը ան-  
գամոց պատկանած աթոռներու վրայ բազ-  
մել, խաբելով քանի մը միամիտներ և ինչ  
ինչ խոտուածներով անոնց քուէները կոր-  
զելով...:

Կրնայ ըլլալ որ ատոնք իրենց իրա-  
ւունքը ստանալ ուզեն կամ ձգեն, ու Բա-  
րեգործականին բարեկարգութեան նկատ-  
մամբ անտարբեր գտնուին: սակայն զոնէ  
չեն կրնար երեւակայել թէ ո՛ր է մէկ  
անգամի մը կառավարութեան առջև ըրած  
մէկ բողոքը բաւական է ասին ու վրայ ը-  
նելու այն կազմակերպութիւնը, որուն  
Ժողով անունը պիտի տան զեղձարարներ...:

Բայց ուրիշ բան մ'ալ կայ: Գոնէ այդ  
ամբաստանուածները խելացիութիւնը ունե-  
նային քաջալիլ ժողովէն եթէ երբէք ընտ-  
րուած են, մինչև որ իրենք զիրենք արդա-

բացնեն ըստ արձանագրութեան Ընդհ.  
Ժողովոյ, և պատճառ չ'դառնալին ընկերու-  
թեան գործերուն խանգարման:

Այժմեւութիւն ունեցող օրինակ մը ի-  
րենց աչքին առջև գնելով կարծենք բա-  
ւական միտքերին պիտի լուսաբանուած  
ըլլայ, սիրելու համար օքնեքները:

Աղքատագրի թաղապետական ժողո-  
վին մէջ զեղձուճներ եղած ըլլալու կաս-  
կած մը երեւան կուգայ վերջերս:

Երկար բարակ լրագրական նիւթերու  
առիթ կ'ընծայէ այս, որուն մէջ ամբաս-  
տանուած է կ'ըսուի, եւ Երաբար Բաշա:  
Տեսէք ի՞նչ կը կարգանք անցեալ շաբ-  
թուան Էմիլիանի կազմի մէջ:

Երկրի գրոյցներուն համաձայն, Ա.  
ղէքսանդրիոյ կառավարելը Թաղապետա-  
կան վերջին ժողովին մէջ պիտի տալար-  
կէ որ Թաղապետութեան Ընդհ. Տնօրէն  
Երաբար Բաշա գազրի իր պաշտօնէն, մին-  
չև բացուած քննութեան աւարտիլը և ար-  
դիւնքին ձեռք բերուիլը, եթէ այս վեր-  
ջերը, այսինքն Երաբար Բաշա, ինքնաբե-  
ւարար արձակուող մը չ'պահանջէ:

Կարծենք թէ այս գէպը լաւ առաջ-  
նորդող մ'է մեր նորընտիր ամբաստանեալ  
Ժողովականներուն, եթէ ասեղի ծայրի չափ  
օրէնքը կը հասնան, և անոնց՝ որոնք իրենց  
քուէներով պաշտպանելու պիտի ելլեն  
զեղձարարները:

Ասիկայ թէ և շիրենք ընտրողներուն  
գնդասեղի հարուած մը պիտի ըլլայ, սա-  
կայն անոնք ալ իբրև դարակորովի ազգա-  
ւերներ օրէնքները յարգել թող սովորին,  
այսպէսով կրնայ փրկուիլ մեր ազգը և ո՛չ  
թէ քուէներով...:

Եթէ կ'ուզեն զեղձուճները թող չա-  
րունակուին գործուիլ. մենք միայն կ'ար-  
ձանագրենք. օր մը այսպիսիներու գերեզ-  
մանին վրայ պատալու համար թէ՛ իր գեղ-  
ձարարներ ապրեցան ու մեռան... ստակա-  
լի չէ՛ այս:

Իսկ միւս կողմանէ՛ ինչպէս կը լսենք,  
պիտի գտնուին անգամներ՝ և նոյն իսկ ան-  
գամ չեղող ազգայիններ որ — սրով՛հետեւ  
երեւցած փաստն 4500 զը՛ք ազգատիրն  
ու որբին է եւ հետեւաբար հանրային —  
հանրագրերով պիտի պահանջեն ամբաս-  
տանակներուն պաշտօնէ գաղաբուրը: Բա-  
ւական պատիժ չ'պիտի ըլլայ այս երբեք  
համար ներկայի մէջ. իսկ ապագայ և, ար-  
դէն ըսինք թէ ստակալի է:

Աւարտութեամբ կը լսենք թէ՛ Գահի-  
րէի Լսարան-Ընթերցաստան Պատ. վարչու-  
թիւնը ձեռնարկած է առաջիկայ կիրակի  
Շտառ Ապա-իւլ-Աղիլի երկրպագական թա-  
րուին մէջ Լսարան մը տալ, որ պիտի ա-  
տենախօսէ Մկրտիչ Էֆէնտի Փոթիուկան  
և Արմենիոս Լրագրի Խմբագիր-Տնօրէնը, ո-  
րուն երկրպագոյն այցելութեան օգուտ կը  
քաղէ Լսարանի Պատ. վարչութիւնը:

Կը տեղեկանանք թէ՛ Լսարանի վար-  
չութիւնը այս առիթով իր ըրած խնամուող  
կարգաբարութիւնները՝ Լսարանի տեղը, օրը  
և ժամը պաշտօնապէս պիտի ծանուցանէ  
հրատարակութիւններով:

## Հ Ն Ո Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Պերիլն 16 Հոկտ. — Պետ գորսվարները  
հոս հասան. Ամբոխը անհամար էր. այն-  
պէս որ մեծ մեղուքները կրցան իրենց քր-  
նակարանները հասնիլ զնձորանալ արդարա-  
կներու մէջ:

Լոնտոն 21 Հոկտ. — Բրիտանական ռե-  
նիս Բոքարիս եւ Միսիսիս քերականագի  
նաւերն Հաւեյով Մեկնեցան, ծովակալ  
Պրիմի հրաւանասարարեան սակ:

Նիւ-Եորք 21 Հոկտ. — Ամերիկայի համ-  
բային գործարարներու ժողովը ընդհանուր  
գործաբոյի դադարուող կը յայտարարէ:

Պերիլն 21 Հոկտ. — Գերմանիոյ Խոր-  
հրդարանը ցորենի վրայ ընդունեց 6 մարգ  
կըր նուախագոյն սակ:

## Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Գ Ա Հ Ի Ր Է		Համաճարակին ընթացքը		Գահիրէի	
Հոկտ.	մէջ.	1	4	4	4
9	4	4	4	4	4
10	0	0	1	1	1
11	1	1	1	1	1
12	1	1	1	1	1
13	0	0	0	0	0
14	2	2	2	2	2
15	0	0	0	0	0

Ա Ձ Դ  
Երիտասարդ մը քաջահմուտ տոմարա-  
կալ և փորձառու՝ որ իր բոլոր պաշտօնա-  
վարած տեղերէն վկայեալ է, պատրաստ է  
այցելու հաշուակալի պաշտօն ստանձնել  
գիւրամատչելի ամսավճարներով:

